

կանական հարցը շատ է հետաքրքրում մի շարք հրապարակախոսներին եւ թաղաքատնտեսութեան գիտնականներին (այստեղ նկատի է առնուում, ի հարկէ, ոչ թէ մասնակի գաղութումներ, այլ կազմակերպուած գաղթականութիւնը (colonisation) :

Այսպիսի գիտնականներ ինչպէս Ծր. Լիւթ, Բոչէր, Բոգաբերթուս, Ֆրանսագի Լըրուս-Պուլիէօ, յետոյ գիտաւորականները որոշք լաւ ծանօթ են Թիւրքիայի հետ, Մուլթէն, Ծոն Տէր Կողջ փաշան եւ ուրիշները, այն կարծիքն են յայտնում, որ Փոքր-Ասիան մե ստպարէզ է ներկայացնում գերմանական գաղութներին համար, իսկ ոմանք մինչեւ անգամ հաստատ կերպով ասում են, որ Փոքր Ասիան ապագայում կը ներկայացնէ մի գերմանական գաղութ :

Այս ձգտումներին մասին երկար չենք խօսելու այստեղ, որովհետեւ նոքա շատ կանոնաւոր մինչեւ անգամ Գերմանացիների համար, բաւական է ցոյց տալ որ մեծ անհամաձայնութիւններ կան գաղութների ճշդի վերաբերմամբ. օրինակ՝ մէկ հեղինակը ցոյց է տալիս Փոքր Ասիայի հիւսիսային մասերում յարմար տեղեր գերման գաղթականութեան համար, այսինքն Ատաբազարի հարաւային մասերը, Սաքքարիա գետի ափերը, Էսկիլեհէրի եւ Քուտայի շուրջը, յետոյ Պուրսաք գետով գէպի Անգորա, միւրը ցոյց է տալիս Ալարիայի երկիրները, իսկ ոմանք, — Կիլիկիան, եւ անհասարակ արդիւն եւ ապագայ գերմանական երկաթուղու գծերի եղբրքը գտնուող երկիրները, Գերմանիայի ներգործական միջամտումը Արեւելեան Հարցին մէջ, եւ իւր բոլոր ծրագրերն, որ կանակած, մեծ նշանակութիւն ունին Հայերի համար : Դորա մասին հետեւեալ համարում :

Պարիզ ԳէՈՐԳ ՄԵԼԻՔ-ԿԱՐԱԳԷՕԶԵԱՆ



ԼԱՅՑԳՐՈՔ

— 0 —

Ը

ՆԱՐԵԿԱՑԻՆ

Ա

Միհնաւորին հեծութիւնէն կրծաբախ
Կը զըզըրդի խոռոչն անլոյս, փապար խոր,
Տըրտում հոգւոյ զուր ստուերալից քարափոր,
Ուր ամենայն ծայն զըզլման ողբ է դանդաղ :

Հող ոչ կանթեղ կայ, ոչ ճաճանչ մանրամաղ՝
Այլ խաւարի ցաւ եւ կական վըշտաւոր :
Հող առ Աստուած կ'աղաղակէ սուրբ Գրիգոր,
Ու կը քըսէ գետնին վրայ ճակատ պաղ :

Փրկէ՛ դանի, միայնութեան մո՛ւլթ քաւիչ,
Բազմորոգայթ փորձութիւնէն մեղսաշատ :

Փրկէ՛ դանի՝ աղիքաւոր սըրտի ճի՛նջ :

Եթէ՛ դանի պըզոնց բոցոտ ժառն խորհուրդ,
Թող գագաթին վրայ վերէն աննդհատ
Ի յնայ կաթի ապաշխարման շիթ մը ցուրտ :

Բ

Կ'աղաղակէ այսպէս՝ Աստուա՛ծ, յոյս սրտիս,
Կը պապակիմ ճառագայթիդ սըրբութեան :

Տեսութեանդ մի՛ զիս զըկեր յաւիտեան,

Ու բարկութեանդ կապանօք մի՛ կապեր զիս :

Գրե՛ծ ու սին կեանք մը տըւիթ թըշուառիս
Որ լամ՝ եւ դու կընքես մուրակ թողութեան :

Կը յօրինեմ գիշեր ցորեկ դառն մատնան
Դառն հեծութեանց՝ որ ճննճեալն իմ հոգին :

Ու թող թոքերս լըլկին, լեզուս սեւանայ,
Թող փրտտիմ, թող մահ բուրեմ, թող բառնամ
[կոծ

Բայց ողորմէ՛ ինծի, Աստուա՛ծ Աստուածոց :

Թող ես դառնամ միտելօրինաց քահանայ

Եւ գիւթաղ ինծի. սակայն, ո՛վ Անմահ,

Թաղ որ մտնամ երկնից Գաղաքն ամրապահ :

Գ

Բայց յաշաղկոտ չար քաղաք սըրտով փուտ,
Նախանձալից կը հրնշրնան միասին,

Եւ վանատան բակը նըստած կը խօսին —

Դա հերժուածող է, ծայթ է, կեղծ է եւ սուտ :

Կը բամբասին : Ու նոր ժողոված կարմիր թութ

Ըսկուտեղով ահա քայած առջեւին

Կը բաշխեն թուի բըզըրըկէ մը գինին,

Կը հըռչառն խոլոռելով բըբեր մութ :

Կ'արհամարէ ըզմեղ, կ'ըսեն, ինք միայն

Կը փափաքի ստանալ համբաւ սըրբութեան :

Դա՛տ վարենք, դա՛տ, եղբա՛րք, մեղ պէտք է
[աւանան :

Իխանաւոր, Եպիսկոպոս ամենայն

Պէտք է գիտնան՝ դեւի է դա որոգայթ,

Պիղծ է Գրիգոր, աղանդաւոր է եւ ծայթ :

Դ

Ո՛վ սուրբ՝ ահա հրաւիրակներն որ կուգան,
Կուգան ի՛նքն՝ Մեծաւորաց տո՛ւր համար :

Գրիգոր կ'ելլէ ճրգնարանէն լըռարար,
Անձախն արժգոյն երեւոյթքի մը նըման :

Երթա՛նք, կ'ըսէ, բայց ո՞վ հիւրերն պատուական
նընդրեմ, ինծի հետ առէ՞ք ճաշ մը յօժար :
Երկու տապկած աղաւնի, զոյգըն պաշար ,
Կը պատրաստէ որ ճաշակեն միարան :

Բայց արեղայք կ'ոռնեն՝ Աստուա՛ծ, վա՛յ ինծի
Այսօր ուրբաթ է՝ զու պա՛հայ ալ կը խոռեն :
Ձէի գիտեր, կը մըռմըռայ սուրբ հեղ :

Եւ թընչիկներն ահա կ'օրհնէ մատնացի .
Եւ կհանք կ'առնուն, կը թըթըռան թեւաբախ .
Եւ աշուրնին կը պըլպըլայ ինչպէս շաղ :

Ե

Անմիտ մարդոց որ իր առջին կուշ ինկած
Կը թախանձեն ներքի՝ կ'ըսէ սուրբ Գրիգոր .
Դուք հանեցիք զիս իմ խորշէս մենաւ որ
Ուր վայելել մըտեր էի միայն լաց :

Թողէ՛ք հանդարտ զիս , զիս թողէ՛ք անկասկած,
Կ'ատուեմ յարմիրն , մահու հալաւ ախտաժուր ,
Լայ կը բաղձամ՝ հալել մայել զիս բոլոր ,
Որպէս զի շուտ երթամ թըռչիմ առ Աստուած :

Կը փափաքիմ մաքրել զաւել զիս ամբողջ .
Թեքեւս հիւր գայ ինծի Կոյս գեղեցիկ ,
Որ լոյս ունի մարգարտափայլ խոպուպիկ :
Ա՛խ այն ատեն պիտի բերկրի հողիս ողջ ,
Թէ փըրկութիւն գրտայ՝ պիտի գիտնամ ես ,
Պիտի օրհնեմ Կեանքս՝ անմահ մըշտապէս :

Ջ

Պոր՛ըրգաւո՛ր անձաւ, միայն զու կըրնաս
Մանրապատու՞մ ընել ի՛նչչափ աղաղակ
Եւ ի՛նչչափ ջալ անդուլ հոռեց հոգին փակ ,
Ու կանգնեցաւ անձնապարտաւ դատախազ :

Ո՞վ հըրեղէն բարբառ , հաւա՛տք աննիւղ ,
Դուք հիւնեցիք զուք ծիրեցիք զայն համակ ,
Եւ հեշտութիւնն որ իր սըրտին էր կամակ
Վիշաք միայն կը շընորհէր հանապաղ :

Ի՛նչ տեսիլքներ , ի՛նչ երազներ , ի՛նչ շողեր
Այդ մ'ըթուեթեան խոր տեսաւ ադիօք ան ,
Ի՛նչ անհուն բոց մ'արդեօք զանի կ'ողողէր :

Օր մը մըտան փապարն եւ ոչ զոք զըտան .
Հացը մաշեր էր իր մարմինն աննըման—
Նարեկացին աներեւոյթ էր եղեր :

ՎԱՅՐԱՄ ՍՎԱՃԱՆԱ

ՄԵՐ ԴՐԱՑԻՆԵՐԸ

Այս ընդհանուր վերնագրով ուսումնասիրութեանց շարք մը կը սկսինք հրատարակել Անանիիսի մէջ , Մեր ազգային գործունէութեան ամենէն անհրաժեշտ տարրերէն մէկը, —տարր մը որ , ինչպէս միւսները , մինչեւ հիմա շատ հարեւանցի կերպով մշակուած է , —անվնասն է մեր դրացի, մեր բնակակից ցեղերը՝ մանրամասն , իրական , ճշգրիտ ծանօթութեամբ մը : Մեր գրութիւնը պահպանելու համար , մեր ցեղային շահերը ամրացնելու համար , պէտք է որոշապէս գիտնանք շահերը , ձգտումները , ուժերը մեր բնակակիցներուն ու դրացիներուն որոնց հետ ամէն վայրկեան գործ ունեցած ենք եւ պիտի ունենանք ինչ ալ ըլլան պայմանները , պիտանք անոնց բարի կամ յոռի տրամադրութիւնները զէպ ի հայ ժողովուրդը , թափանցենք այդ տրամադրութեանց պատճառները , որպէսզի մեզի նկատմամբ լարուած հակա-կրութիւններուն դէմ յիստիքուն կարենանք պատրաստուիլ ինքնապաշտպանութեան եւ որ-պէսզի մեզի ընծայուող հակակից ու համակից ուժերէն ջանանք օգտուիլ՝ մեր ցեղին զօրաց-մանը եւ ընդհանուր երկրին բարգաւաճմանը նպատակով : Բաճֆի իր վէպերուն մէջ մերթ ուշիմ կերպով ցոյց տուած է ինչ որ Թուրքիոյ Հայը կրնար յուսալ ու քաղիլ իր դրացիներէն եւ ինչ ծառայութիւն որ ի փոխարէն կրնար անոնց մատուցել : Անտարակուսելի է, զժբաղդաբար , որ վերջին շարժումներուն մէջ , հայ ժողովուրդը չգիտցաւ օգտուիլ իր տրամադրութեանը տակ զանուած շահակից ուժերէն եւ ասոնց մէկ մասն ալ իրեն հակակից դարձուց :

Մենք հրաւիրեցինք մեր Հայաստանցի բնակիչներէն մէկ քանին որ ատանց ու եւ կան-խաղ կարծիքի , առանց ձգտումի , մեր ընթերցողներուն ներկայացնեն Հայոց դրացի ցեղերն ու ժողովուրդները՝ այնպէս ինչպէս որ են իրենք իրենց մէջ եւ ան բարոյական ու նիւթա-կան յարաբերութիւններով զոր ունին մեր ժողովրդին հետ : Այսօր կը հրատարակուի ուսում-նասիրութիւն մը նշխարներու վրայ , Արդէն պատրաստ ունինք յօդուած մը Գուրդերու մա-սին : Եւ զո՛ր պիտի ըլլանք որ մեր ընթերցողներէն ու աշխատակիցներէն անոնք որ Թրքական